ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

2012

Հայաստանի Քաղաքացիական Ասամբլեայի
Վանաձորի գրասենյակ

ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

2012

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի
Վանաձորի գրասենյակ

Բաց Հասարակության Հիմնադրամներ-Հայաստան

Սույն զեկույցում տեղ գտած տեսակետների և վերլուծությունների հեղինակը Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակն է, որն էլ միայն պատասխանատու է նյութի բովանդակության համար: Դրանք արտահայտում են հեղինակների կարծիքը և հաստատված չեն Բաց Հասարակության Հիմնադրամների կողմից, հետևաբար չեն ներկայացնում Բաց Հասարակության Հիմնադրամների դիրքորոշումներն ու տեսակետները: Սույն զեկույցի բովանդակությունը կարող է չհամընկնել Բաց Հասարակության Հիմնադրամների տեսակետներին: Սույն զեկույցի տպագրությունը հնարավոր է դարձել Բաց Հասարակության Հիմնադրամների ամբողջական ֆինանսական օժանդակության շնորհիվ՝ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կայունություն և զարգացում ծրագրի շրջանակներում, դրամաշնորհ N 20036865:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

4 ՆԱԽԱԲԱՆ

6 ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՄԱՍԻՆ

12 ՀՔԱ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 2012 ԹՎԱԿԱՆԻՆ

27 ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

33 2012 ԹՎԱԿԱՆԻՆ ՏՊԱԳՐՎԱԾ ՆՅՈՒԹԵՐԸ

35 ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ 2012 ԹՎԱԿԱՆԻՆ

37 ՖԻՆԱՆՍՆԵՐ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

27 ՏԵՂԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԿԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՑԱՆՑԵՐ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ

Հարգելի՛ գործընկերներ,

Սույն զեկույցով ձեզ ենք ներկայացնում Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի 2012 թ. գործունեությունը: Նախորդ տարվա ընթացքում իրականացված ծրագրերը ուղղված են եղել ՀՀ-ում մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում առավել խոցելի խմբերի իրավունքների պաշտպանությանը:

Կազմակերպությունը նաև շարունակել է ինստիտուցիոնալ կարողությունների զարգացումը՝ ելնելով ռազմավարական նպատակների և խնդիրների լուծման անհրաժեշտությունից:

Ինչպես կարող եք համոզվել զեկույցից, հիմնականում ուշադրություն է դարձվել մարդու իրավունքների խնդիրներին պետական այն մարմինների հետ հարաբերություններում, որոնց գործելակերպը առավել ռիսկային է մարդու իրավունքների տեսակետից:

Շարունակում են մտահոգիչ մնալ կյանքի իրավունքի, խոշտանգումներից զերծ մնալու, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի խախտման դեպքերը զինված ուժերում և ոստիկանությունում:

Ռազմավարական դատավարությունների իրականացման պրակտիկայով արձանագրվել են դատական իշխանության գործունեության հիմնախնդիրներ, որոնք շարունակում են մնալ խիստ մտահոգիչ: Մարդու խախտված իրավունքների վերականգնման ինստիտուտի՝ անկախ դատական իշխանության բացակայությունը խոչընդոտում է իրավունքի գերակայության սկզբունքի իրականացմանը ՀՀ-ում:

2012 թ. կազմակերպության կողմից առաջին անգամ նախաձեռնվեց մարդու իրավունքների բնագավառում պետության պարտավորությունների գնահատումը ըստ բյուջետային հատկացումների՝ թմրամոլության և հոգեբուժության բնագավառներում: Մարդու իրավունքներին վերաբերող օրենսդրական փոփոխությունների նպատակով կազմակերպության կողմից մշակվել և ներկայացվել են առաջարկներ տարբեր պետական մարմիններին:

2012 թ. կազմակերպությունը դիտորդական առաքելություն է իրականացրել խորհրդարանական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ընթացքում, որոնք կազմակերպության կողմից գնահատվել են ոչ ազատ և ոչ արդար:

Կազմակերպության կողմից իրականացվել են 11 դրամաշնորհային ծրագրեր, և քանի որ հիմնարար սկզբունք ենք համարում հասարակական կազմակերպությունների գործունեության թափանցիկությունը և հաշվետվողականությունը, ապա մեր գործունեության վերաբերյալ բոլոր տվյալները, այդ թվում՝ ֆինանսական, ներկայացված են մեր կազմակերպության կայքէջում: Ցանկալի կլիներ նույն մոտեցումը տեսնել պետական մարմիններին տրամադրվող դրամաշնորհային միջոցների և բյուջետային հատկացումների տնօրինման վերաբերյալ:

Շնորհակալություն ենք հայտնում մեր գործընկերներին նախորդ տարվա արդյունավետ համագործակցության համար և ակնկալում ենք շահագրգիռ կառույցների, անհատների դիտողությունները, կարծիքները հրապարակվող զեկույցի վերաբերյալ:

Հարգանքով՝

Արթուր Սաքունց
ՀՔԱ Վանաձորի գրասենյակի նախագահ

ՀՔԱ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՒՂԵՐՁԸ

Հարգելի՛ գործընկերներ,

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի զեկույցը փաստում է, որ կազմակերպությունը ունեցել է լուրջ մարտահրավերներ թե՛ կառույցի ներքին բարեփոխումների և թե՛ իր նպատակային գործունեությունն իրականացնելու ճանապարհին: Հատկանշական է, որ զեկույցը Հայաստանի ներքաղաքական կյանքի յուրահատուկ լուսաբանումն է՝ մարդու իրավունքների տեսակետից: Սա նշանակում է, որ կազմակերպությունը կարողացել է հետևել իր ռազմավարական ծրագրին և նպատակներին: Մենք տեսնում ենք, որ համանման զեկույցներին բնորոշ հաջողության պատմություններին քիչ տեղ է հատկացված, և հիմնականում շեշտը դրված է գործունեության ոլորտների խնդիրներին և անելիքներին: Ներկայացված թվերն ու փաստերը, սակայն, ապացուցում են, որ դժվարին պայմաններում, հաճախ ճնշումներին և արգելքներին դիմակայելով՝ ՀՔԱ Վանաձորի գրասենյակն իրոք հաջողության է հասել: Սա ակնհայտ երևում է կազմակերպության աշխատանքների գնահատման ամենահիրական և արդյունավետ ցուցանիշից՝ շահառուների թվի շարունակական աճից և համագործակցության, գործընկերների առավել մեծ շրջանակից: Կազմակերպության խորհուրդը գոհունակությամբ փաստում է, որ զեկույցում ընդգրկված բոլոր նպատակները և դրանց ուղղությամբ տարվող աշխատանքները համապատասխանում են մեր համատեղ հանդիպումների, տարեկան ժողովի, ինչպես նաև ռազմավարության քննարկման ընթացքում նշված առաջարկներին: Զեկույցը համապատասխանում է ՀՔԱ Վանաձորի գրասենյակի փոփոխված կանոնադրությանը, կազմակերպության գործունեությունը կարգավորող ներքին օգտագործման փաստաթղթերին, դոնոր կազմակերպությունների և գործընկերների չափանիշերին, համահունչ է միջազգային իրավունքի ոգուն և տառին:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի խորհուրդ

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը (այսուհետ՝ ՀՔԱ Վանաձորի գրասենյակ) հիմնադրվել է 1998 թ. որպես Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Հայաստանի կոմիտեի մասնաճյուղ: Այն 2001 թ. ՀՀ արդարադատության նախարարության կողմից գրանցվել է որպես հասարակական կազմակերպություն և վերագրանցվել 2005 թ.:

Կազմակերպության գրասենյակը գտնվում է Լոռու մարզկենտրոն Վանաձոր քաղաքում: Կազմակերպությունը ունի ներկայացուցչություններ նույն մարզի Ալավերդի, Տաշիր, Ստեփանավան և Սպիտակ քաղաքներում: ՀՔԱ Վանաձորի գրասենյակի Սպիտակի ներկայացուցչությունը 2012 թ. գրանցվել է որպես «Սպիտակի Հելսինկյան խումբ» իրավապաշտպան հասարակական կազմակերպություն:

Կազմակերպությունն իր գործունեությունը ծավալում է երկրի ողջ տարածքում:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի տեսլականն է՝

Մարդու արժանապատվության, ժողովրդավարության և խաղաղության գերակա արժեքներով ձևավորված հասարակություն:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի առաքելությունն է՝

Ազգային և տարածաշրջանային մակարդակներում քաղաքացիական նախաձեռնությունների աջակցությունն ու խթանումը, խաղաղասիրական ու իրավապաշտպանական գործունեության հզորացումը:

Գործունեության ոլորտներն են՝

- Մարդու իրավունքների պաշտպանություն
- Շահերի պաշտպանություն և քաղաքացիական նախաձեռնություններ
- Խաղաղասիրություն:

Նշված ոլորտներում կազմակերպությունը ձգտում է հասնել

- օրենսդրության և դրա կիրառման համապատասխանեցմանը միջազգային չափանիշներին քաղաքական, քաղաքացիական և սոցիալական իրավունքների պաշտպանության ոլորտներում
- մարդու իրավունքների վկաների ինստիտուտի ներդրմանը
- հանրային մասնակցության մեխանիզմների խթանմանը
- մարդու իրավունքների պաշտպանության, խաղաղասիրության և քաղաքացիական նախաձեռնությունների աջակցության նպատակով շահերի պաշտպանության քաղաքականության մշակմանը և իրականացմանը
- քաղաքացիների խաղաղասիրական պոտենցիալի հզորացմանը
- մեկուսացված հասարակությունների միջև հանդուրժողականության, փոխվստահության և երկխոսության զարգացմանը
- ռազմականացման մակարդակի նվազեցմանը:

Շահառուներն են՝

- զինապարտները (նախազորակոչային տարիքի երիտասարդ, զորակոչիկ, զինծառայող, պահեստազորում գտնվող անձ, զինվորական ծառայության նախապատրաստության մեջ գտնվող անձ)
- իրավապահ մարմինների և դատական իշխանությունների ապօրինի գործողություններից կամ անգործությունից տուժած անձիք
- հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձիք
- տարեցներին սոցիալական սպասարկման և խնամքի ծառայություններ տրամադրող հաստատությունների, մանկատների և խնամքի կենտրոնների խնամակալության տակ գտնվող անձիք
- թմրամիջոցներ գործածող կամ թմրամիջոցներից կախվածություն ունեցող անձիք,
- հակամարտությունից տուժած անձիք
- ընտրողները և թեկնածուները
- խտրականության դրսևորման զոհերը:

Կազմակերպության շահառու են հանդիսանում նաև այն անձիք, ում պատշաճ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու, աշխատանքային կամ համայնքային սեփականության իրավունքները խախտվել են:

Շահագրգիռ կողմերն են՝

- ՀՀ դատական ատյանները
- ՀՀ սահմանադրական դատարանը
- Մարդու իրավունքների եվրոպական դատարանը
- տեղական ինքնակառավարման մարմինները
- ՀՀ մարզպետարանները
- ՀՀ կառավարությունը
- ՀՀ ազգային ժողովը
- զանգվածային լրատվամիջոցները
- միջպետական և միջազգային մարմինները
- ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը
- տեղական և միջազգային գործընկեր կազմակերպությունները և ցանցերը
- փակ և կիսափակ հաստատություններում հասարակական դիտորդություն իրականացնող խմբերը:

Գործունեության տեսակներն են՝

Իրավական աջակցություն

- անվճար իրավական աջակցություն (գրավոր և բանավոր)
- դատական պաշտպանություն, ներկայացուցչություն
- արագ արձագանքում/թեժ գիծ

Մարդու իրավունքների մոնիթորինգ/քաղաքացիական վերահսկողություն

- փակ և կիսափակ հաստատություններում
- ընտրական գործընթացների նկատմամբ
- դատաքննության նկատմամբ
- թիրախային ոլորտներում պետական ծախսերի նկատմամբ
- թիրախային ոլորտներում պետական ծրագրերի իրականացման նկատմամբ
- տեղական ինքնակառավարման մարմինների կառավարման նկատմամբ

Քաղաքացիական նախաձեռնություն և շահերի պաշտպանություն

- իրազեկության բարձրացում (արշավներ, հրապարակումներ, հանրային միջոցառումներ/ մամլո ասուլիսներ, քննարկումներ, շնորհանդեսներ, հրատապ հայտարարություններ, բողոքի ակցիաներ)
- օրենսդրության և պրակտիկայի ուսումնասիրություն ու վերլուծություն, օրենսդրական նախաձեռնություններ
- ռազմավարական դատավարություններ
- ՀՀ միջազգային պարտավորությունների վերաբերյալ ստվերային զեկույցների պատրաստում և ներկայացում
- Հայաստանում մարդու իրավունքների վիճակի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում միջազգային կազմակերպություններին /հրատապ հայտարարություններ, զեկույցներ/

Հարկ է նշել, որ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից իրականացվող գործողությունները փոխլրացնում են միմյանց, նպատակ ունեն հասնել համակարգային փոփոխությունների և բարելավել մարդու իրավունքների վիճակը թիրախային բնագավառներում:

> *Կազմակերպության կողմից իրականացվող բոլոր գործողությունները միտված են մարդու իրավունքների պաշտպանությանը, կոնֆլիկտի խաղաղ կարգավորմանը, քաղաքացիական նախաձեռնությունների աջակցմանը և առանձին շահառու խմբերի շահերի պաշտպանությանը:*

Կազմակերպական կառավարում/Մարդկային ռեսուրսներ

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կառուցվածքը

Կազմակերպության ղեկավար բարձրագույն մարմինը ընդհանուր ժողովն է, որն օժտված է կազմակերպության կառավարման և գործունեության առնչությամբ վերջնական որոշում կայացնելու իրավասությամբ: Ընդհանուր ժողովը կազմված է կազմակերպության անդամներից: ՀՔԱ Վանաձորի գրասենյակն ունի 14 անդամ:

Ընդհանուր ժողովի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում կազմակերպության ընթացիկ աշխատանքների ղեկավարումը ստանձնում է կազմակերպության խորհուրդը:

Կազմակերպության խորհուրդը ներկայացուցչական մարմին է, որն ընտրվում է ընդհանուր ժողովի կողմից:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի խորհուրդը պաշտոնապես ընտրվել է 2012 թ. մարտին և բաղկացած է 5 անդամներից: Խորհրդի նախագահությունը փոխանցվում է այբբենական կարգով, վեցամսյա ժամկետով:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի խորհրդի անդամները

Ագնիեշկա Կլասովսկա
«Մարդու իրավունքների հելսինկյան հիմնադրամ», Լեհաստան, կազմակերպության ղեկավար

Արմեն Սարգսյան
«Ինտերնյուզ» Մեդիա աջակցման կենտրոն ՀԿ (ներկայումս՝ «Մեդիա նախաձեռնությունների կենտրոն»), պրոդյուսեր

Պասկալ Բոկկերս
միջազգային փորձագետ

Զիգֆրիդ Վոբեր
«Ավստրիական հելսինկյան ասոցիացիա հանուն մարդու իրավունքների և միջազգային երկխոսության կազմակերպություն», անդամ

Քրիստ Մարուքյան
«Բիբլոս բանկ Արմենիա» ՓԲԸ, Վանաձոր մասնաճյուղ, կառավարիչ

Աշխատակազմը

Կազմակերպության նախագահը Արթուր Սաքունցն է, ով հանդիսանում է կազմակերպության հիմնադիրներից մեկը:

2012 թվականին ՀՔԱ Վանաձորի գրասենյակը ունեցել է մշտական աշխատակազմի 22 անդամ, (որոնցից չորսը մարզային ներկայացուցիչներ), 121 կարճաժամկետ ծառայություն մատուցող (որոնցից 110-ը՝ դիտորդներ, 11-ը՝ փորձագետներ և փաստաբաններ):

Արթուր Սաքունց
ՀՔԱ Վանաձորի գրասենյակի նախագահ

Մանուշակ Օհանյան
Գլխավոր հաշվապահ

Վարդինե Գրիգորյան
Գրասենյակի կառավարիչ

Անի Ղամբարյան
Հանրային կապերի մասնագետ

Սիրուն Ղարագյոզյան
Թարգմանիչ

Գայանե Հարությունյան
Տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետ

Սուրեն Անանյան
Գրասենյակի վարչական օգնական

Տաթևիկ Մատինյան *(մինչև 2012 մարտի 30-ը)*
Ծրագրերի համակարգող

Օֆելյա Ջալյան
Ծրագրերի համակարգող

Արմինե Սադիկյան
Խաղաղասիրության բաժնի համակարգող

Անահիտ Չիլինգարյան
Շահերի պաշտպանության բաժնի համակարգող

Արայիկ Ջալյան
Իրավաբան

Անի Զատինյան
Իրավաբան

Սուզաննա Ղարաղաշյան
Պացիենտների հարցերով իրավաբան
Տաթևիկ Սիրադեղյան
Իրավաբանի օգնական

Մարիետա Թեմուրյան
Մոնիթորինգի մասնագետ

Ծրագրերի օգնականներ
Դավիթ Մարտիրոսյան
Նազելի Մովսեսյան

Մարզային ներկայացուցիչներ
Իրավախորհրդատուներ
Արտուր Հարությունյան
Անուշ Գալստյան
Գայանե Անախասյան
Էլադա Նասիբյան

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը կարևորում է քաղաքացիական հասարակության դերը քաղաքականության մշակման և կառավարությանը հաշվետու պահելու գործընթացում:

2012 թ. կազմակերպությունը ակտիվ գործունեություն է ծավալել << քաղաքացիների իրավունքների պաշտպանության գործում: Գործունեության զգալի մասն ընդգրկել է հանրապետության հյուսիսային մարզերը և Երևան քաղաքը: Կազմակերպությունն իր գործունեությունն իրականացնելիս առաջնորդվել է Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային փաստաթղթերի, նորմերի տեղայնացման և պաշտպանության անհրաժեշտությունից: 2012 թ. կազմակերպությունը գործունեություն է ծավալել երեք ռազմավարական ուղղություններով՝ մարդու իրավունքների պաշտպանություն, խաղաղասիրություն, քաղաքացիական նախաձեռնությունների խթանում և առանձին խմբերի շահերի պաշտպանություն:

2012 թ. ՀՔԱ Վանաձորի գրասենյակը կազմակերպել և/կամ մասնակցել է տարբեր հասարակական միջոցառումների (երթեր, բողոքի ցույցեր, կլոր սեղաններ, մամլո ասուլիսներ)՝ զինված ուժերում մարդու իրավունքների խախտումների, մահացության դեպքերի, դրանց ոչ պատշաճ քննության հարցերին առնչվող խնդիրները ներկայացնելու նպատակով:

2012 թ. ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից իրականացվել են 11 դրամաշնորհային և ենթադրամաշնորհային ծրագրեր, որոնք ուղղված են եղել կազմակերպության ռազմավարական նպատակների և խնդիրների իրականացմանը, կազմակերպության կազմակերպական և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը: 2012 թ. ՀՔԱ Վանաձորի գրասենյակի աշխատակազմը մասնակցել է ավելի քան 30 կոնֆերանսների, սեմինարների, մասնագիտական վերապատրաստման դասընթացների և ուսուցողական այցերի տեղական և միջազգային մակարդակներում Հունգարիայում, Էստոնիայում, Չեխիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Շվեդիայում, Լեհաստանում, Իսպանիայում, Բելգիայում, Բոսնիա-Հերցեգովինայում, Վրաստանում, Ուկրաինայում և Շվեյցարիայում:

1. ՀՔԱ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կայունություն և զարգացում

Բարեփոխումների իրականացման քաղաքական կամքի բացակայության պայմաններում մարդու իրավունքների պաշտպանության մարտահրավերները ավելի ու ավելի են կատարելագործվում և այդ պատճառով ՀՔԱ Վանաձորի գրասենյակը կարևորում է իր անձնակազմի կարողությունների զարգացումը անընդհատ փոփոխվող իրավիճակում գործելու և թիրախ ոլորտներում մարդու իրավունքների հիմնախնդիրներին պատշաճ արձագանքելու համար: Կարողությունների զարգացումը նաև հնարավորություն է տալիս ընդլայնել կազմակերպության գործունեության շրջանակը՝ հաշվի առնելով, որ հասարակական հիմնախնդիրները փոխկապակցված են և ըստ այդմ չեն կարող լուծվել մեկուսի:

«ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կայունություն և զարգացում» ծրագիրը եռամյա ծրագիր է, որը իրականացվում է 2011 թ. և ուղղված է Հայաստանի Հանրապետությունում ժողովրդավարական արժեքների ամրապնդմանը և զարգացմանը, մարդու իրավունքների պաշտպանության, քաղաքացիական մասնակցության ազգային մեխանիզմների ամրապնդմանը և քաղաքացիական վերահսկողության ներուժի խթանմանը, որը պետք է իրականացվի ՀՔԱ Վանաձորի գրասենյակի

զարգացման և կայունության միջոցով:

Ծրագիրն իրականացվում է Բաց Հասարակության Հիմնադրամների ֆինանսական աջակցությամբ:

Ծրագրի շրջանակներում ՀՔԱ Վանաձորի գրասենյակը իրականացնում է կազմակերպական զարգացմանն ուղղված միջոցառումներ ռազմավարական ուղղություններով (իրավական աջակցություն, խաղաղասիրություն, մարդու իրավունքների մոնիթորինգ և շահերի պաշտպանություն)՝ անձնակազմի մասնագիտական կարողությունների զարգացման միջոցով: Ծրագրի գործողությունները ուղղված են կազմակերպության մշտական, շարունակական աշխատանքի ապահովմանը:

Ծրագրի արդյունքում ձևավորվել է կազմակերպության մշտական աշխատակազմը, որն ապահովում է կազմակերպության շարունակական գործունեությունը և ռազմավարական նպատակների իրականացումը: Բաց Հասարակության Հիմնադրամների ֆինանսական աջակցությամբ աշխատակազմի անդամները պարբերաբար մասնակցել են տեղական և միջազգային դասընթացների և համաժողովների իրենց մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները զարգացնելու նպատակով: Աշխատակազմի վերապատրաստման նպատակն էր բարելավել անձնակազմի հմտությունները ֆինանսական կառավարման, հաշվետվությունների պատրաստման, շահերի պաշտպանության, ռազմավարական դատավարության, նոր մեդիա գործիքների կիրառման, տեղեկատվության անվտանգության և արդյունավետ իրավաբանական գործունեության իրականացման ոլորտներում:

Իրավական աջակցություն

Անվճար իրավաբանական խորհրդատվության տրամադրում

2012 թ. ընթացքում ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից իրավական աջակցություն է տրամադրվել 646 քաղաքացու, որից 422 քաղաքացու տրամադրվել է իրավաբանական խորհրդատվություն բանավոր ընթացակարգով, իսկ 224 քաղաքացու գործ շարունակվել է գրավոր ընթացակարգով, ևս 228 քաղաքացու խորհրդատվություն է տրամադրվել կազմակերպության Լոռու մարզի Ալավերդի, Տաշիր, Ստեփանավան և Սպիտակ քաղաքների ներկայացուցչությունների կողմից: Քաղաքացիները կազմակերպության ներկայացուցչություններ դիմել են սեփականության իրավունքի, սոցիալական ապահովության իրավունքի և ընտանեկան իրավունքի խախտման դեպքերով:

2012 թ. ընթացքում քաղաքացիներին իրավական աջակցություն է տրամադրվել ոչ միայն անձամբ, այլև հեռախոսով և էլ. փոստի միջոցով: Էլեկտրոնային փոստի միջոցով իրավախորհրդատվություն է տրամադրվել 18 քաղաքացու, հեռախոսազանգերի միջոցով՝ 45:

Իրավական աջակցություն ստանալու նպատակով ՀՔԱ Վանաձորի գրասենյակ դիմած քաղաքացիներից 32-ը ցանկացել են

մնալ անանուն և չեն տրամադրել իրենց անձնական տվյալները:

2012 թ. ընթացքում քաղաքացիները ՀՔԱ Վանաձորի գրասենյակ դիմել են մարդու իրավունքների հետևյալ խախտումներով.

Իրավունքը	Քանակը	%
Սեփականության իրավունք	219	31.9%
Արդար դատաքննության իրավունք	91	13.2%
Սոցիալական ապահովության իրավունք	96	14.0%
Ընտանեկան իրավունք	78	11.4%
Ջորակոչիկի իրավունքներ	66	9.6%
Արտահայտվելու/տեղեկատվության ազատություն	37	5.4%
Աշխատանքային իրավունք	35	5.1%
Սպառողների իրավունք	10	1.5%
Առողջության պաշտպանվածության իրավունք	10	1.5%
Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք	7	1.0%
Խոշտանգումներից և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունք	7	1.0%
Ընտրական իրավունք	11	1.6%
Քաղաքացիություն ստանալու իրավունք	5	0.7%
Տեղաշարժի ազատություն	2	0.3%
Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք	2	0.3%
Կրթության իրավունք	1	0.1%
Ապահովագրական իրավունք (ԱՊՊԱ)	1	0.1%
Կյանքի իրավունք	1	0.1%
Այլ	8	1.2%
Ընդամենը	**687**	**100%**

2012 թ. ընթացքում կազմակերպություն դիմած քաղաքացիների խնդիրները վերաբերել են կամ իրավունքները խախտող են հանդիսացել հետևյալ մարմինները.

Մարմինը, ում առնչվել է խնդիրը	Ընդամենը
Պաշտպանության նախարարություն	44
Սոցիալական ապահովություն/նպաստներ	8
Անշարժ գույքի կադաստր	7
Տեղական ինքնակառավարման մարմիններ	6
Ընդհանուր իրավասության դատարան	5
Ոստիկանություն	5
Դատական ակտերի հարկադիր կատարում	4
Դատախազություն	4
Վերաքննիչ դատարան	4
Վարչական դատարան	3
Ազգային արխիվ	2
Սոցիալական ապահովություն՝ տարիքային կենսաթոշակներ	2
Բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողով	1
Այլ	13
Ընդամենը	108

Հարկ է նշել, որ քաղաքացիներն առավել հաճախ դիմում են սեփականության, սոցիալական ապահովության և արդար դատաքննության իրավունքների խախտման դեպքերով, սակայն սա չի նշանակում, որ օրինակ խոշտանգումներից և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու կամ ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքները հազվադեպ են խախտվում Հայաստանի Հանրապետությունում: Խնդիրը կայանում է նրանում, որ որոշ իրավունքների խախտումներ առավել դժվար են բացահայտվում, իսկ զոհերը, որպես կանոն խուսափելով հետագա կրկնակի ճնշումներից, հաճախ հրաժարվում են իրենց խախտված իրավունքների վերականգնումից: Որոշ դեպքերում քաղաքացիները ոստիկանության կողմից գործադրվող ճնշումների ազդեցության տակ ոչ միայն հրաժարվում են իրենց կողմից ՀՔԱ Վանաձորի գրասենյակին տրամադրված ինֆորմացիայից, այլև մեղադրում են կազմակերպությանը իրենցից սպառնալիքով տեղեկատվություն կորզելու մեջ:

Դատական գործեր

2012 թ. ընթացքում կազմակերպության կողմից նախաձեռնվել և իրականացվել են 22 ռազմավարական նշանակության դատական գործեր, որոնցից

- կյանքի իրավունք՝ 3 գործ
- արդար դատաքննության իրավունք՝ 7 գործ
- խոշտանգումներից և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունք՝ 2 գործ
- համայնքի սեփականության իրավունք (ավագանու որոշման վիճարկում)՝ 2 գործ
- համայնքի ղեկավարի գործողությունները (անգործությունը) ոչ իրավաչափ ճանաչելու պահանջ՝ 1 գործ
- ոստիկանության աշխատակիցների գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու վերաբերյալ՝ 1 գործ
- պատվին, արժանապատվությանը գործարար համբավին պատճառված վնասի հատուցման պահանջ՝ 2 գործ
- ընտրական իրավունք՝ 1 գործ
- տեղեկատվություն ստանալու (արտահայտվելու) իրավունք՝ 1 գործ
- զորակոչիկների իրավունք՝ 1 գործ
- բնակարանի անձեռնմխելության իրավունք՝ 1 գործ:

Վերը նշված գործերից 9-ը իրականացվել է կազմակերպության իրավաբանների կողմից, 13-ը՝ ներգրավված փաստաբանների:

2012 թ. ՀՔԱ Վանաձորի գրասենյակը 5 գործով գանգատներ է ներկայացրել Մարդու իրավունքների եվրոպական դատարան (ՄԻԵԴ):

ՄԻԵԴ ներկայացված գանգատները վերաբերել են՝

- անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք՝ 1 գործ
- հավաքների և միավորման ազատության իրավունք՝ 2 գործ

- կյանքի իրավունք՝ 1 գործ
- արտահայտվելու ազատության իրավունք՝ 1 գործ:

Կազմակերպության կողմից խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին մեկ գործ է ներկայացվել ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գլխավոր հանձնակատարին: Գործը նախաձեռնվել է դեռևս 2010 թ.:

Մարդու իրավունքների մոնիթորինգ/քաղաքացիական վերահսկողություն

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի գործունեության բաղկացուցիչ մասն է կազմում քաղաքացիական վերահսկողությունը, որը հնարավորություն է տալիս գնահատել իշխանության ներկայացուցիչների կողմից իրենց պարտավորությունների կատարման արդյունավետությունը:

Քաղաքացիական վերհասկողության նպատակն է՝

- բացահայտել մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող ինստիտուցիոնալ խնդիրները, օրենսդրական երաշխիքների զարգացման և իրավապաշտպանական պրակտիկայի բարեփոխման նպատակով
- ապահովել մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության երաշխիքները և հասնել իշխանությունների կողմից իրենց պարտավորությունների լիարժեք իրականացմանը:

Քաղաքացիական վերահսկողության մեխանիզմներից կազմակերպությունը կիրառում է ինչպես դասական մոնիթորինգը փակ և կիսափակ հաստատություններում, այնպես էլ ընտրությունների դիտորդությունը, պետական ծրագրերի և պետական ծախսերի մոնիթորինգը, ԶԼՄ մոնիթորինգը, հետևում է առանձին իրավական ակտերի կիրառմանը:

Թմրամիջոց գործածող, հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ 2012 թ. լրատվության միջոցներով տարածվող նյութերի մոնիթորինգ

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը մշտական ուշադրության կենտրոնում է պահում թմրամիջոց գործածող, հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունը: Այս նպատակով կազմակերպությունն իրականացնում է ԶԼՄ մոնիթորինգ, որի նպատակն է բացահայտել հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող, թմրամիջոց գործածող, թմրամիջոցից կախվածություն ունեցող անձանց իրավունքների վիճակը Հայաստանում, գնահատել հասարակության և իշխանությունների վերաբերմունքը և համապատասխան միջոցներ ձեռնարկել նրանց իրավունքների խախտումների կանխարգելման կամ վերականգնման համար:

Մոնիթորինգի շրջանակներում 2012 թ. դիտարկվել են թվով 20 տպագիր և էլեկտրոնային, պաշտոնական և ոչ պաշտոնական զանգվածային լրատվության միջոցներ:

Նյութերի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ լրատվական միջոցներով ավելի շատ լուսաբանվում են թմրամիջոցների ապօրինի շրջանառության փաստերով քրեական հետապնդման վերաբերյալ նյութեր, քան թմրամիջոց գործածող, թմրամիջոցներից կախվածություն ունեցող, հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց խնդիրներին առնչվող նյութեր: Ընդ որում թմրամիջոց գործածող անձանց, թմրամիջոցների ապօրինի շրջանառությանը վերաբերող նյութերից մեծամասնությունը պարունակում են հետաքննության տարրեր և այսպես ասած պատժիչ բնույթի են, այսինքն նյութերի մեջ մեծամասամբ ներկայացվում է իրավապահ մարմինների կողմից թմրամիջոցների ապօրինի շրջանառության մեջ կասկածվող անձանց բերման ենթարկելու, պատժելու վերաբերյալ տեղեկատվություն:

Հոգեկան առողջության ոլորտին վերաբերող նյութերը հիմնականում վերաբերում են ոլորտում տիրող իրավիճակին աշխարհում և Հայաստանի Հանրապետությունում մասնավորապես, ինքնասպանություններին կամ ինքնասպանության փորձերին, հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանը:

Ինչ վերաբերում է թմրամիջոց գործածող, հոգեկան ու մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների խախտումներին, ապա այս մասին որպես կանոն խոսք չի գնում, միաժամանակ զանգվածային լրատվության միջոցներն իրենք են հաճախակի խախտում այս անձանց անձնական կյանքի և գաղտնիության իրավունքը, ինչը դրսևորվում է նրանց անձնական տվյալների հրապարակայնացմամբ:

Հոգեկան և նարկոլոգիական բժշկական օգնության և խնամքի ծառայությունների ֆինանսավորման գնահատում

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը 2011-2012 թթ. ընթացքում իրականացրել է հոգեկան ու մտավոր հաշմանդամություն և թմրամիջոցներից կախվածություն ունեցող անձանց բուժման և խնամքի համար պետական բյուջեից հատկացվող միջոցների մոնիթորինգ: Մոնիթորինգն անդրադառնում է հոգեկան առողջության ոլորտում բժշկական ծառայությունների մատուցման համապատասխանությանը ոլորտը կարգավորող օրենսդրությանը, հոգեկան ու մտավոր հաշմանդամություն ունեցող և թմրամիջոցներից կախվածություն ունեցող անձանց իրավունքների իրականացմանը և հանրային ֆինանսների ծախսման արդյունավետությանը ու թափանցիկությանը նշված բժշկական ծառայությունների մատուցման ժամանակ:

Ուսումնասիրության համար կազմա-

կերպությունը հիմնական տեղեկատվությունը ձեռք է բերել տեղեկատվության հարցումների միջոցով: Հարցումները հիմնականում վերաբերել են բուժհաստատությունների ընթացիկ, կապիտալ ծախսերին, մատուցվող ծառայություններին, հոգեբուժական և նարկոլոգիական բուժհաստատությունների կապիտալ ծախսերի ֆինանսավորման կարգին կամ այլ իրավական հիմքերին, 2008-2012 թթ. ընթացքում կատարված ստուգումներին, ուսումնասիրություններին, վերահսկողության արդյունքներին: Տեղեկատվության հարցումների միջոցով կազմակերպությունը ստացել և ուսումնասիրել է նաև բուժհաստատությունների՝ ՀՀ առողջապահության նախարարության հետ 2008-2012 թթ. կնքված պայմանագրերի օրինակները:

Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ հոգեկան առողջության պահպանման համար նախատեսված ֆինանսական միջոցները գրեթե ամբողջությամբ ծախսվում են նյարդահոգեբուժական բուժհաստատություններում ստացիոնար բուժման կամ խնամքի համար: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հատկապես նման հաստատություններում խոցելի է հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրականացումը: Բացի այդ նույնիսկ այդ ծախսերի չափը որոշվում է ոչ թե կարիքի գնահատման, այլ տարեկան բյուջեով ՀՀ առողջապահության նախարարությանը հատկացված ֆինանսական միջոցների բաշխման միջոցով:

Մինչդեռ Հայաստանի Հանրապետությունը 2010 թվականին վավերացրել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան, որի 19-րդ հոդվածում ամրագրված է, որ կոնվենցիան ամրագրած պետությունները ապահովում են, որ հաշմանդամություն ունեցող անձիք օգտվեն մի շարք ներտնային, բնակության հետ կապված և համայնքային աջակցության այլ ծառայություններից և ստանան համայնքում ապրելու և ներգրավվելու, ինչպես նաև համայնքից չմեկուսացվելու համար անհրաժեշտ անձնական աջակցություն:

Պետական ծրագրերի իրականացման մոնիթորինգ

2009-2012 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ազգային ծրագրի մոնիթորինգ

Կազմակերպությունը 2011 թ. իրականացնում է 2009-2012 թթ. ընթացքում Հայաստանում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ազգային ծրագրի մոնիթորինգ ուսումնասիրելու համար, թե ծրագիրը որքանով է անդրադառնում թմրամիջոց գործածող անձանց իրավունքների պաշտպանությանը, ծրագրով նախատեսված միջոցառումներն ինչպես են իրականացվում և որքանով է ծրագիրն ազդում իրավիճակի դրական փոփոխության վրա:

Ուսումնասիրության հիման վրա 2012 թ. կազմվել է նախնական զեկույց, որում ներկայացվում է ազգային ծրագրի կատարումն ու արդյունավետությունը 2011 թ. տվյալներով:

Մասնավորապես, ազգային ծրագրի կատարումն ու արդյունավետությունը գնահատելու համար կազմակերպությունը ուսումնասիրել է ազգային ծրագրով նախատեսված միջոցառումների ժամանակացույցը, 2011 թ. ընթացքում ազգային ծրագրի վերաբերյալ հրապարակումները, կազմակերպության կողմից ծրագրի պատասխանատուներին ուղղված 17 տեղեկատվության հարցումների պատասխանները:

Գնահատվել է ժամանակացույցը՝ որպես ծրագրով սահմանված նպատակներին հասնելու համար միջոցառումներ սահմանող

փաստաթուղթ, ժամանակացույցի առաջին 5 բաժիններում ընդգրկված միջոցառումների իրականացումը (այս բաժինները ներառում են ծրագրային նպատակների և խնդիրների լուծմանն ուղղված անմիջական միջոցառումները): Ընդ որում միջոցառումների իրականացումը գնահատվել է ոչ միայն ըստ քանակի, այլև գնահատվել է նրանց կատարման բովանդակությունը՝ ելնելով մարդու իրավունքների համընդհանուր սկզբունքներից, միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած պարտավորություններից: Ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացումը ըստ քանակի գնահատելու համար միջոցառումները, ըստ կատարման ժամանակամիջոցների, բաժանվել են 3 խմբի՝ մասնավորապես ըստ իրականացման տարեթվերի:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ծրագիրն ավարտվում է 2012 թվականի տարեվերջին, և միջոցառումների վերջնական կատարման համար տեղեկատվությունը հասանելի է միայն 2013 թվականի սկզբում, զեկույցի վերջնական տարբերակը նախատեսվում է պատրաստել վերոնշյալ տեղեկատվությունը ստանալուց հետո:

1.2. Ռազմավարական դատավարությունների վարչարարություն

2012 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2013 թվականի մայիսի 1-ն ընկած ժամանակահատվածում ՀՔԱ Վանաձորի գրասենյակը իրականացրել է «Ամերիկյան իրավաբանների ընկերակցություն» կազմակերպության կողմից ֆինանսավորվող «Ռազմավարական դատավարությունների վարչարարություն» ծրագիրը: Ծրագրի նպատակն էր բարելավել մարդու իրավունքների պաշտպանությունը և խոշտանգումների կանխարգելումը զինված ուժերում և ոստիկանությունում ռազմավարական դատավարություններ իրականացնելու միջոցով: Ծրագիրը հնարավորություն տվեց կազմակերպությանը ձեռք բերել ենթադրամաշնորհներ կառավարելու հմտություններ:

Ծրագրի շրջանակներում ֆինանսավորվել են մրցութային կարգով ընտրված 4 ռազմավարական գործեր, որոնցից մեկ գործ նախաքննության փուլում, երկու գործ դատաքննության փուլում և մեկ գործ ներպետական ատյանները սպառած: Գործերը վերաբերել են արդար դատաքննության իրավունքին, խոշտանգումներից և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունքին, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածով սահմանված իրավունքին (պատիժ՝ բացառապես օրենքի հիման վրա), իսկ գործերից մեկով վիճարկվել է ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի անհամապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 2-րդ մասին, 18-րդ հոդվածի 1-ին մասին և 22-րդ հոդվածի 7-րդ մասին:

Ծրագրի շրջանակներում հանդիպումներ են կազմակերպվել Լոռու, Տավուշի, Շիրակի և Սյունիքի մարզերի փաստաբանների հետ, որոնց ընթացքում քննարկվել են ռազմավարական գործերի նշանակությունը հատկապես մարդու իրավունքների խախտման դեպքերով զինված ուժերում և ոստիկանությունում խուզարկության, ձերբակալության և կալանքի ժամանակ: Կազմակերպվել են խորհրդատվություններ փաստաբանների համար ծրագրով ֆինանսավորվող գործերի ռազմավարությունները մշակելու նպատակով:

2. ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՄԻՏՎԱԾ ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1. ՀՀ-ում ոստիկան–քաղաքացի հարաբերություններում մարդու իրավունքների վիճակի բարելավմանն ուղղված ծրագրեր

Ոստիկանության աշխատակիցների կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերի վերլուծության արդյունքում 2012 թ. ՀՔԱ Վանաձորի գրասենյակն արձանագրել է՝ Հայաստանի Հանրապետությունում ոստիկանության աշխատակիցների կողմից շարունակվում են մարդու իրավունքների խախտումները քաղաքացիների բերման ենթարկելու, խուզարկության կատարման և ձերբակալության վերաբերյալ որոշումների ընդունման և իրականացման գործընթացներում, ոստիկանության բաժանմունքներում շարունակվում են քաղաքացիների նկատմամբ վատ վերաբերմունքի պրակտիկան՝ բռնությունների, հոգեբանական և ֆիզիկական բռնությունների և այլ անօրինական գործողությունների միջոցով: Պարբերական բնույթ է կրում քաղաքացիների՝ իրավական աջակցություն ստանալու իրավունքի խախտումը բերման ենթարկելու, խուզարկություն կատարելու և ձերբակալելու ընթացքում: Ոստիկանության կողմից քաղաքացիների նկատմամբ վատ վերաբերմունքի դեպքերով չի իրականացվում բազմակողմանի, լրիվ, օբյեկտիվ քննություն ինչպես նախաքննության, այնպես էլ դատաքննության ընթացքում:

2012 թ. ՀՔԱ Վանաձորի գրասենյակը իրականացրել է 2 ծրագիր՝ ուղղված մարդու իրավունքների վիճակի ուսումնասիրությանը և բարելավմանը քաղաքացի-ոստիկանություն հարաբերություններում:

2.1.1. ՀՀ ոստիկանության համակարգի բարեփոխումներ

«ՀՀ ոստիկանության համակարգի բարեփոխումներ» ծրագիրը եռամյա ծրագիր է, որը ֆինանսավորվում է Նորվեգիայի հելսինկյան կոմիտեի կողմից: Այն ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից իրականացվում է 2011 թ. և ուղղված է ՀՀ ոստիկանության համակարգում բարեփոխումների ամրագրմանը՝ իրականացնելով ոստիկանության համակարգի ուսումնասիրություն: Ծրագիրն ընդգրկում է Լոռու, Շիրակի և Տավուշի մարզերը: 2012 թվականին ծրագրի շրջանակներում կազմակերպությունը շարունակել է իրավական աջակցություն տրամադրել քաղաքացիներին Լոռու, Տավուշի և Շիրակի մարզերի ոստիկանության բաժանմունքների աշխատակիցների անօրինական գործողությունների և մարդու իրավունքների խախտման առնչությամբ: Իրականացվել են ռազմավարական դատավարություններ, ոստիկանության վերաբերյալ ՁԼՄ հրապարակումների մոնիթորինգ, ոստիկան-քաղաքացի հարաբերություններում մարդու իրավունքների վիճակի մոնիթորինգ՝ փաստաբանների կողմից լրացված դիտարկման քարտերի վերլուծության միջոցով, ուսումնասիրվել է ազգային օրենսդրությունը և պետական ռազմավարությունը և մշակվել են առաջարկություններ:



Քաղաքացիների իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով կազմակերպությունը կիրառել է ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ: 2012 թվականի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին նկարահանվել է անիմացիոն սոցիալական հոլովակ 3 թեմաների վերաբերյալ՝ խուզարկություն, բերման ենթարկել և ձերբակալություն, որը տարածվել է ինչպես Լոռու, Տավուշի և Շիրակի մարզերի տեղական հեռուստաալիքներով, այնպես էլ համացանցի միջոցով[1]:

«ՀՀ ոստիկանության համակարգի բարեփոխումներ» և «ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կարողություն և զարգացում» ծրագրերի շրջանակներում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում պատրաստված «Ոստիկանության աշխատակիցների կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերի վերլուծություն»[2] և «ՀՀ ոստիկանության գործունեության ոլորտում 2010-2011 թթ. բարեփոխումների ծրագրի իրականացման վերլուծություն»[3] զեկույցները ներկայացվել են 2012 թ. մարտի 20-ին Երևան քաղաքում կազմակերպված քննարկման ժամանակ: Քննարկմանը հրավիրվել են պետական կառույցների՝ ՀՀ ոստիկանության, ՀՀ դատախազության, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների և ԶԼՄ-ների ներկայացուցիչներ: Քննարկման նպատակն էր ներկայացնել ոստիկանության գործունեության ոլորտում առկա մարդու իրավունքների խախտումները, քննարկել դրանց պատճառները և լուծման ուղիները շահագրգիռ կազմակերպությունների, պատասխանատու մարմինների հետ:

2.1.2. Երիտասարդների ներգրավումը Հարավային Կովկասի իրավապաշտպանական շարժման մեջ

2012 թ. մարտի 16-ին Վրաստանում՝ Թբիլիսի քաղաքում, իսկ մարտի 20-ին Երևանում տեղի ունեցավ «Հայաստանում և Վրաստանում մարդու իրավունքների պաշտպանությունը քաղաքացի-ոստիկանություն հարաբերություններում» զեկույցի[4] շնորհանդեսը: Զեկույցը պատրաստվել էր National Endowment for Democracy (NED) (Ժողովրդավարության աջակցության ազգային ֆոնդ) կազմակերպության ֆինանսական աջակցությամբ իրականացված «Երիտասարդների ներգրավումը Հարավային Կովկասի իրավապաշտպանական շարժման մեջ» եռամյա ծրագրի շրջանակներում: Ծրագրի նպատակն էր՝ բարձրացնել երիտասարդների դերը իրավապաշտպանական շարժման մեջ Հարավային Կովկասի տարածաշրջանում:

Ծրագրի շրջանակներում ստեղծվել է մշտադիտարկման խումբ՝ բաղկացած 17 երիտասարդ ակտիվիստներից (7 մասնակից Վրաստանից, 8՝ Հայաստանից, 2՝ Հարավային Օսեթիայից): Մոնիթորինգի ընթացքում

[1] Մարդու իրավունքները ոստիկան-քաղաքացի հարաբերություններում, http://hcav.am/publications/մարդու-իրավունքները-ոստիկան-քաղաքաց

[2] «Ոստիկանության աշխատակիցների կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերի վերլուծություն», http://hcav.am/wp-content/uploads/2012/04/Մարդու-իրավունքների-խախտման-դեպքերի-վերլուծություն.pdf

[3] «ՀՀ ոստիկանության գործունեության ոլորտում 2010-2011 թթ. բարեփոխումների ծրագրի իրականացման վերլուծություն», http://hcav.am/wp-content/uploads/2012/04/Զեկույց.pdf

[4] "Отчет о соблюдении прав человека во взаимоотношениях человека и полиции в Армении и Грузии", http://hcav.am/wp-content/uploads/2012/04/police-report-ru1.pdf

ուսումնասիրվել է Հայաստանում և Վրաստանում ոստիկան-քաղաքացի հարաբերությունները կարգավորող օրենսդրությունը, իրականացվել են հարցազրույցներ նախկին ձերբակալվածների, ձերբակալվածների հարազատների, ՀԿ-ների ներկայացուցիչների, ոստիկանության աշխատակիցների և փաստաբանների հետ, իրականացվել է դատական նիստերի դիտարկում:

Զեկույցում տարվել են համեմատական վերլուծություններ, ներկայացվել են օրենսդրության և պրակտիկայի բարելավմանն ուղղված առաջարկություններ:

2.2. ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված ծրագրեր

2012 թ. ՀՔԱ Վանաձորի գրասենյակը ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների վիճակը կանոնադրային հարաբերությունների խախտումների և մահացության դեպքերի ոչ պատշաճ քննության հետևանքով գնահատել է խիստ մտահոգիչ:

Կազմակերպությունը բազմիցս հանդես է եկել հայտարարություններով և դատապարտել է ՀՀ զինդատախազության ոչ համարժեք դիրքորոշումը և գնահատականները զինված ուժերում մարդու իրավունքների խախտման դեպքերի վերաբերյալ: Կազմակերպությունն իր հայտարարություններով և հաղորդագրություններով հորդորել է ՀՀ գերագույն գլխավոր հրամանատարին, պաշտպանության նախարարին և իրավապահ մարմիններին լրջորեն վերաբերվել մարդու իրավունքների խախտման յուրաքանչյուր դեպքին, դրանց վերաբերյալ հասարակական կազմակերպությունների և ԶԼՄ-ների ահազանգերին և առաջարկել է լուրջ քայլեր ձեռնարկել հասարակության մոտ գոյություն ունեցող մտահոգությունները փարատելու և արմատական փոփոխություններ կատարելու ուղղությամբ[5]:

[5] 1. «Զորակոչիկները հնարավորություն չունեն բողոքարկելու իրենց առողջական վիճակի հետազոտության արդյունքները», Դեկտեմբեր 26, 2012, http://hcav.am/events/զորակոչիկները-հնարավորություն-չունե
2. «Անհապաղ դադարեցնել անմարդկային վերաբերմունքը», Դեկտեմբեր 27, 2012, http://hcav.am/events/անհապաղ-դադարեցնել-անմարդկային-վերա
3. «Բանակային գործերի արատավոր քննության վերաբերյալ հայտարարություն», Դեկտեմբեր 28, 2012, http://hcav.am/events/բանակային-գործերի-արատավոր-քննությա

2.2.1. «ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների հզորացումը»

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը 2012 թ. սեպտեմբերից սկսել է իրականացնել «ՀՀ ԶՈՒ մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների հզորացումը» ծրագիրը, որն աջակցություն է ստացել ԱՄՆ պետդեպարտամենտի դրամաշնորհի շրջանակներում:

Ծրագրի շրջանակներում իրականացվել է զինծառայության ընթացքում զինծառայողների մարդու իրավունքների խախտումների, ներքին բողոքարկման մեխանիզմների, բժշկական ծառայության տրամադրման վիճակի ուսումնասիրություն, որի նպատակով հարցազրույցներ են իրականացվել 2012 թ. զինված ուժերի կարգապահական կանոնագրքի ընդունումից հետո զորացրված անձանց հետ: Ուսումնասիրությունն անց է կացվել Լոռու, Շիրակի, Տավուշի մարզերում և Երևան քաղաքում, որի արդյունքները ներկայացվել են «Մարդու իրավունքների պաշտպանության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետության զինված ուժերում» զեկույցում[6]:

«ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կարողություն և զարգացում» ծրագրի շրջանակներում 2012 թ. իրականացվել է ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների խախտման փաստերի արձանագրում, համապատասխան տեղեկատվության հավաքագրում՝ պաշտպանական գերատեսչությանը և նրա ստորաբաժանումներին ուղղված 34 անձանց վերաբերյալ տեղեկատվության հարցումների, նամակների, դիմումների միջոցով: Բացի այդ զինծառայողներից, զորակոչիկներից և նրանց հարազատներից տեղեկատվության ստացման, ինչպես նաև իրավական աջակցություն տրամադրելու նպատակով կազմակերպվել են այցելություններ:

Իրականացվել է լրատվական միջոցների մոնիթորինգ, որի արդյունքների հիման վրա կազմվել է 2012 թ. ՀՀ զինված ուժերում մահացության դեպքերի վիճակագրությունը, մահացության դեպքերի հանգամանքների նկարագրությունները, դրանց բացահայտման վերաբերյալ քննության ընթացքը:

2012 թ. դեպքերի ուսումնասիրության և իրավական աջակցության արդյունքում առողջական խնդիրների առկայության հիմքով զինծառայությունից ազատվել է մեկ զինծառայող, նույն խնդրի առկայությամբ զինծառայությանը ոչ պիտանի են ճանաչվել 2 զորակոչիկ և ազատվել զինվորական ծառայությունից, իսկ 5 զորակոչիկ ստացել է տարկետում հետագա բուժման նպատակով:

Կազմակերպություն դիմած քաղաքացիների գործերի հիման վրա իրականացվել է ՀՀ զինված ուժերում զորակոչիկների և զինծառայողների առողջական վիճակի և զորակոչիկներին ու զինծառայողներին տրամադրվող բժշկական ծառայության վիճակի ուսումնասիրություն, որի հիման վրա կազմվել և տպագրվել է «Բժշկական ծառայության հետ կապված զորակոչիկների և զինծառայողների մարդու իրավունքների խախտումների վիճակը» զեկույցը[7]: Զեկույցն անդրադարձել է նախազորակոչային տարիքի անձանց, զորակոչիկների առողջական վիճակի զննությունը կարգավորող օրենսդրությանը և դրա կիրառման խնդիրներին, զինծառայության ընթացքում ժամկետային զինծառայողներին տրամադրվող բժշկական ծառայությունը կարգավորող օրենսդրությանը և դրա կիրառման խնդիրներին և մշակվել են համապատասխան առաջարկություններ:

Զեկույցը 2012 թ. դեկտեմբերի 21-ին ներկայացվել է Երևանում կայացած քննարկման ընթացքում, որին մասնակցել են պետական կառույցների, միջազգային և տեղական կազ-

[6] «Տեղեկանք 2012 թ. զինված ուժերում մարդու իրավունքների վիճակի մասին», 2013 թ., http://hcav.am/wp-content/uploads/2013/03/Տեղեկանք-զինված-ուժեր_2012.pdf

[7] «Բժշկական ծառայության հետ կապված զորակոչիկների եւ զինծառայողների մարդու իրավունքների խախտումների վիճակը», 2012 թ., http://hcav.am/wp-content/uploads/2012/12/ՀՔԱՎ_Զեկույց_առողջական_2012.pdf

մակերպությունների ներկայացուցիչներ:

Պատրաստվել և ներկայացվել է նաև «Ինձ բացակա չդնեք» փաստագրական տեսաֆիլմը, որը նվիրված էր ջրծաղիկից 2011 թ. դեկտեմբերի 30-ին մահացած զինծառայող Հայկ Խաչատրյանին:

3. ԽԱՂԱՂԱՍԻՐՈՒԹՅԱՆՆ ԱՋԱԿՑՈՂ ԾՐԱԳՐԵՐ

«Ծրագրերի և համագործակցության միջոցով խաղաղասիրության նպաստում» և «Կառուցիր խաղաղություն ինքդ»

Միջազգային խաղաղասիրական ցանցերի հետ համագործակցության շրջանակներում կազմակերպությունը հանդիսացել է գործընկեր «Երիտասարդ խաղաղասերների միացյալ ցանցի» և «Եվրոպական միջմշակութային ֆորում» կազմակերպության կողմից նախաձեռնված «Ծրագրերի և համագործակցության միջոցով խաղաղասիրության նպաստում» և «Կառուցիր խաղաղություն ինքդ» ծրագրերին:

Ծրագրերի նպատակն էր եվրոպական երկրների երիտասարդներին զինել գործիքներով ու կարողություններով իրենց հասարակություններում փոփոխման գործընթացին մասնակցություն ունենալու համար, մեծացնել երիտասարդների դերն այդ գործում՝ համատեղ ծրագրերի իրականացման միջոցով: Ծրագրին մասնակցել են երիտասարդներ Նիդերլանդներից, Իսպանիայից, Ռումինիայից, Հայաստանից, Վրաստանից ու Ադրբեջանից:

4. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ԵՎ ՆԵՐԴՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԾՐԱԳՐԵՐ

4.1. Ընտրությունների նկատմամբ քաղաքացիական վերահսկողություն

2012 թ. ՀՔԱ Վանաձորի գրասենյակը դիտորդական առաքելություն է իրականացրել ՀՀ խորհրդարանական ընտրությունների և ՏԻՄ ընտրությունների ընթացքում: Խորհրդարանական ընտրությունների և Վանաձորի ՏԻՄ ընտրությունների ընթացքում դիտարկվել են ինչպես նախընտրական քարոզչության, այնպես էլ քվեարկության ընթացքը:

2012 թվականի փետրվարի 12-ին կազմակերպության 15 դիտորդներ դիտորդական առաքելություն են իրականացրել ՀՀ Արագածոտնի մարզի Սարալանջ համայնքի թիվ 14/01, Կոտայքի մարզի Հրազդան համայնքի թիվ 25/01, 25/04, 25/06, 25/07, 25/10, 25/15, 25/16, 25/17, 25/22, 25/25 և Շիրակի մարզի Պեմզաշեն համայնքի թիվ 36/01 և 36/02 ընտրատեղամասերում:

2012 թ. ապրիլ-հունիս ամիսներին ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից իրականացվել է «2012 թ. խորհրդարանական ընտրությունների նկատմամբ քաղաքացիական վերահսկողության կարողությունների զարգացում» ծրագիրը: ՀՔԱ Վանաձորի գրասենյակի 91 դիտորդներ քվեարկության օրը դիտորդական առաքելություն են իրականացրել Մալաթիա-Սեբաստիա թիվ 7 ընտրատարածքի 35 ընտրատեղամասերից 31-ում, Լոռու մարզի թիվ 29, 30, 31 ընտրատարածքների թվով 21

> *«Ազատ է միայն նա, ով կարող է իրեն թույլ տալ չստել»:*
>
> ***Ալբերտ Կամյու***

ընտրատեղամասերում, Իջևանի թիվ 41 ընտրատարածքի բոլոր 8 ընտրատեղամասերում և Գյումրիի թվով 3 ընտրատեղամասերում:

2012 թ. սեպտեմբերին իրականացվել է «2012 թ. տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների նկատմամբ քաղաքացիական վերահսկողության կարողությունների զարգացում» ծրագիրը, որի շրջանակներում կազմակերպությունը դիտորդություն է իրականացրել Վանաձոր համայնքի բոլոր 58 տեղամասերում 31 դիտորդների միջոցով:

Կազմակերպությունն իր դիտարկումների արդյունքում արձանագրել է մի շարք խախտումներ, որոնք վկայում են այն մասին, որ 2012 թ. ՀՀ-ում թե՛ տեղական, թե՛ համազգային ընտրությունները չեն համապատասխանել ազատ, արդար և թափանցիկ ընտրությունների միջազգային չափանիշներին: Կազմակերպության կողմից պատրաստվել են զեկույցներ առաջարկություններով, որոնք ներկայացվել են Կենտրոնական ընտրական հանձնաժողով և տարածվել էլեկտրոնային տարբերակով[8]:

4.2. ՏԻՄ կառավարման մոնիթորինգ

2012 թ. նոյեմբերի 1-ից ՀՔԱ Վանաձորի գրասենյակն իրականացնում է Վանաձոր քաղաքի տեղական ինքնակառավարման մարմինների կառավարման մոնիթորինգ, որի նպատակն է նպաստել Վանաձոր համայնքի ինքնակառավարման մարմինների գործունեության հաշվետվողականության և թափանցիկության բարձրացմանը:

Ծրագրով նախատեսվում է գնահատել տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների ընդունման իրավաչափությունը և համապատասխանությունը ՀՀ ՏԻՄ օրենքին և ՀՀ օրենսդրությանը, այդ որոշումների համապատասխանությունը համայնքի բնակիչների շահերին և մարդու իրավունքների սկզբունքներին, ընդունված որոշումների համապատասխանությունը համայնքի ղեկավարի քառամյա և տարեկան ծրագրերին, ինչպես նաև քառամյա ծրագրի համապատասխանությունը ՏԻՄ օրենսդրությանը, բյուջետային հատկացումների համապատասխանությունը համայնքի զարգացման քառամյա պլանին և ընդունված որոշումների իրագործմանը:

Մինչև 2012 թ. ավարտը ծրագրի շրջանակներում իրականացվել է ուսումնասիրության համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերում: Մասնավորապես, Վանաձոր համայնքի ավագանու և քաղաքապետի կողմից ընդունված 2008-2012 թթ. որոշումների, վերջին 4 տարիների բյուջեների և հաշվետվությունների հավաքագրում Վանաձորի քաղաքապետարանի պաշտոնական կայքից, ինչպես նաև տեղեկատվության հարցումների ուղարկում Վանաձորի քաղաքապետարան: Հավաքագրված որոշումների ուսումնասիրություն և վերլուծություն ըստ ՏԻՄ օրենսդրության, համայնքի բնակիչների շահի և մարդու իրավունքների համապատասխանության:

---

[8] 1. «2012 թ. փետրվարի 12-ին ՀՀ Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ընթացքում կարճաժամկետ դիտորդական առաքելության արդյունքների ամփոփում», http://hcav.am/wp-content/uploads/2012/02/Դիտորդության-արդյունքների-ամփոփում.pdf

2. «2012 թ. մայիսի 6-ի խորհրդարանական ընտրությունների դիտորդական առաքելության զեկույց» http://hcav.am/publications/2012-թ-մայիսի-6-ի-խորհրդարանական-ընտրությո-2

3. «Վանաձոր համայնքի 2012 թ. սեպտեմբերի 9-ի ՏԻՄ ընտրությունների դիտորդության արդյունքների ամփոփում» - http://hcav.am/wp-content/uploads/2012/10/LSG-election-observation-report-Arm.pdf

2013 թ. ՏԻՄ որոշումների ուսումնասիրությանը զուգահեռ պլանավորվում է իրականացնել նաև համայնքի վերջին 4 տարիների բյուջեի ուսումնասիրություն: Բյուջետային բաշխումները կհամեմատվեն համայնքի զարգացման քառամյա պլանի հետ, ինչպես նաև կուսումնասիրվի, թե արդյոք համայնքի բյուջեից իրականացվել են համապատասխան բաշխումներ այն որոշումների իրականացման համար, որոնք բյուջետային ներդրում են պահանջում: Քանի որ ըստ էության համայնքի բյուջեն իրենից ներկայացնում է տվյալ համայնքի ՏԻՄ գործողությունների պլանը, բյուջեի և տարեկան հաշվետվությունների ուսումնասիրությունը հնարավորություն կտա պարզելու, թե որքանով են դրանք արտացոլում համայնքի զարգացման առաջնահերթությունները, որքանով են համապատասխանում մարդու իրավունքների և հանրային շահի սկզբունքներին, ինչպես նաև, թե որքանով են բյուջետային կանխատեսումներն իրականացել, ասել է թե՝ որքան արդյունավետ են կառավարվել համայնքային ռեսուրսները:

Ծրագրի ընթացքում իրականացված ուսումնասիրությունների և մշտադիտարկման արդյունքների հիման վրա կկազմվի վերջնական ամփոփիչ զեկույց, որն իր մեջ կներառի ուսումնասիրությունների, քննարկումների և մշտադիտարկման արդյունքում մշակված առաջարկություններ: Զեկույցի շնորհանդեսը և առաջարկությունների ներկայացումը նույնպես կիրականացվի համայնքի բնակիչների և ՏԻՄ ներկայացուցիչների հետ համատեղ հանդիպման/մամուլի ասուլիսի ժամանակ:

> *«Բոլոր մարդկանց փառապանքը վերաբերում է յուրաքանչյուր մարդու»*
> ***— Վացլավ Հավել, Չեխիայի Հանրապետության առաջին նախագահ***

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի գործունեության կարևորագույն ուղղություններից է հանդիսանում շահերի պաշտպանությանը և քաղաքացիական նախաձեռնություններին ուղղված գործունեությունը: Շահերի պաշտպանության իրականացման միջոցով կազմակերպությունը նպատակ ունի համակարգային լուծումներ տալ այն խնդիրներին, որոնք բացահայտվում են և վեր են հանվում կազմակերպության գործունեության ընթացքում: Այս նպատակով կազմակերպության կողմից 2012 թ. իրականացվել են ռազմավարական դատավարություններ, մշակվել են քաղաքականության փաստաթղթեր, օրենսդրական առաջարկներ, կարծիքներ օրենսդրական նախագծերի վերաբերյալ և ներկայացվել համապատասխան մարմիններին: Իր նպատակներին հասնելու համար կազմակերպությունը վարում է բանակցություններ ոլորտում որոշում կայացնելու լիազորություններ ունեցող պաշտոնատար անձանց, այլ շահագրիռ անձանց և մարմինների հետ, կազմակերպում է քննարկումներ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, զանգվածային լրատվամիջոցների և պետական մարմինների մասնակցությամբ, ակտիվ մասնակցություն է ցուցաբերում այլ կազմակերպությունների և պետական մարմինների կողմից կազմակերպված քննարկումներին:

2012 թվականին ՀՔԱ Վանաձորի գրասենյակը քննարկումներ և աշխատանքային հանդիպումներ է կազմակերպել << ոստիկանության, առողջապահության նախարարության, << ԱԺ առողջապահության մայրության և մանկության հարցերով մշտական հանձնաժողովի անդամների հետ:

2012 թ. փետրվարի 22-ին ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից կազմակերպվել և իրականացվել է «Մարդու իրավունքների վիճակը << նյարդահոգեբուժական բուժհաստատություններում» զեկույցի շնորհանդես և քննարկում, որին մասնակցություն են ունեցել << առողջապահության նախարարության, նյարդահոգեբուժական բուժհաստատությունների, ինչպես նաև Բաց Հասարակության Հիմնադրամներ Հայաստանի գրասենյակի ներկայացուցիչները: Հանդիպման արդյունքում որոշվել է << առողջապահության նախարարության և նյարդահոգեբուժական բուժհաստատությունների հետ համատեղ իրականացնել միջոցառումներ, կազմակերպության կողմից վերհանված խնդիրների լուծման ուղղությամբ:

Կազմակերպության մասնագետներն առանձին աշխատանքային հանդիպում-քննարկումներ են ունեցել << առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավար Սուրեն Քրմոյանի, Հայաստանում հոգեկան առողջության քաղաքականություն մշակող խմբի նախագահ Արմեն Սողոյանի, << գլխավոր հոգեբույժ Սամվել Թորոսյանի հետ: Առանձին այցեր են կազմակերպվել Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր, << ԱՆ «Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի Ավանի հոգեբուժական և Քասախի նևրոզների կլինիկաներ: Հանդիպում-քննարկումների նպատակն էր քննարկել կազմակերպության կողմից 2009 թվականին << նյարդահոգեբուժական բուժհաստատություններում իրականացված մշտադիտարկման արդյունքում բացահայտված խնդիրները, խնդիրների ուղղությամբ նախարարության կողմից ձեռնարկված քայլերը, դեռևս առկա խնդիրները, լսել նյարդահոգեբուժական բուժհաստատությունների ղեկավարների առաջարկները կազմակերպության կողմից 2013 թ. նախատեսվող մշտադիտարկման վերաբերյալ:

1.1. Իրավական ակտերի նախագծեր

2012 թ. կազմակերպության կողմից մշակվել է «Հոգեբուժական օգնության մասին» << օրենքում լրացում կատարելու մասին << օրենքի նախագիծը: Նախագիծը ներկայացվել է << ԱԺ առողջապահության մայրության և մանկության հարցերով մշտական

հանձնաժողովի փորձագետին և հետագայում նաև հանձնաժողովի անդամներին: Օրենքի լրացմամբ նախատեսվում է սահմանել հոգեբուժական հաստատությունում բուժում ստացող անձի համար Փաստաբանական գրասենյակի հանրային պաշտպանի միջոցով անվճար իրավաբանական օգնությունից օգտվելու հնարավորություն:

Դեկտեմբերի 13-ին ՀՀ ԱԺ առողջապահության, մայրության և մանկության հարցերի մշտական հանձնաժողովի հետ կայացած հանդիպման ժամանակ հանձնաժողովի նախագահ Արա Բաբլոյանը հավաստիացրեց, որ քննարկումների ժամանակ ներկայացված առաջարկները և բարձրացված խնդիրները հանձնաժողովի ուշադրության կենտրոնում կլինեն, իսկ օպտիմալ առաջարկները կներառվեն նախագծերում[9]:

1.2. ՀՀ սահմանադրական դատարանը բավարարել է ՀՔԱ Վանաձորի գրասենյակի դիմումը

2012 թ. մարտի 6-ին ՀՀ սահմանադրական դատարանը ՀՔԱ Վանաձորի գրասենյակի դիմումի հիման վրա կայացրել է «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի «Զ» ենթակետի, 12-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանելու հարցը որոշելու մասին ՀՀ սահմանադրական դատարանի որոշումը:

ՀՀ սահմանադրական դատարանը իր որոշման մեջ նշել է, որ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 7-րդ մասի «Գերատեսչական ցանկերը գաղտնագրվում են և հրապարակման ենթակա չեն» դրույթը, այնքանով, որքանով չի վերաբերում գաղտնագրման ենթակա կոնկրետ տեղեկատվության, ճանաչել ՀՀ Սահմանադրության 27-րդ և 43-րդ հոդվածների պահանջներին հակասող և անվավեր:

Սույն գործի նախապատմությունը սկսվել է դեռևս 2010 թ. փետրվարի 2-ից, երբ ՀՔԱ Վանաձորի գրասենյակը տեղեկատվության հարցմամբ դիմել էր ՀՀ պաշտպանության նախարարին՝ խնդրելով տրամադրել տեղեկատվություն 2009 թ. ՀՀ զինված ուժերում ծառայության ընթացքում մահացած ժամկետային և պայմանագրային զինծառայողների թվաքանակի, նրանց անունների, ազգանունների և հասցեների վերաբերյալ: Պաշտպանության նախարարությունը մերժել

է տրամադրել պահանջված տեղեկատվությունը՝ հիմնավորելով, որ այն, օրենքի պահանջներից ելնելով, ՀՀ պաշտպանության նախարարի համապատասխան գաղտնի հրամանով գործողության մեջ դրված ՀՀ պաշտպանության նախարարության գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված տեղեկությունների ընդլայնված ցանկի համաձայն, հադիսանում է գաղտնի և կազմակերպությանը չի կարող տրամադրվել: Կազմակերպությունը երկրորդ տեղեկատվության հարցում է կատարել, որով խնդրել է տրամադրել ՀՀ պաշտպանության նախարարի համապատասխան գաղտնի հրամանը և դրանով գործողության մեջ դրված ՀՀ պաշտպանության նախարարության գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված ցանկը: Պաշտպանության նախարարության կողմից կրկին մերժվել է կազմակերպության տեղեկատվության տրամադրումը:

[9] Հանդիպում հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, 2012 թ., դեկտեմբերի 13, http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=5618&year=2012&month=12&day=13&lang=arm

Կազմակերպության տեղեկատվության ազատության իրավունքի խախտման փաստը ճանաչելու պահանջի մասին և որպես ածանցյալ պահանջ՝ ՀՀ պաշտպանության նախարարության գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված ցանկի մասին հրամանը վերացնելու և կազմակերպության կողմից պահանջվող տեղեկատվությունը տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին հայցով կազմակերպությունը անցել է բոլոր ներպետական ատյաններով և արդյունքի չհասնելով՝ դիմել է ՀՀ սահմանադրական դատարան:

1.3. «Մատաղիսի գործ», արդարադատություն 9 տարի անց

2012 թ. դեկտեմբերի 18-ին Շիրակի ընդհանուր իրավասության դատարանն անմեղ ճանաչեց 2003 թ. Լեռնային Ղարաբաղի Մատաղիսի զորամասում ժամկետային 2 զինծառայողի սպանության մեջ մեղադրվող Արայիկ Ջալյանին, Ռազմիկ Սարգսյանին և Մուսա Սերոբյանին:

Մեղադրանքի հիմքում միայն Ռազմիկ Սարգսյանի ինքնախոստովանական ցուցմունքն էր, որը կորզվել էր խոշտանգումների և բռնության միջոցով: Սարգսյանը բազմիցս հայտարարել է, որ 2004 թ. ապրիլի 19-ին՝ առաջին անգամ որպես վկա հարցաքննվելիս, ինքը զինվորական դատախազության քննիչների կողմից մի քանի օր շարունակ ենթարկվել է դաժան ծեծի, հոգեբանական ճնշումների և սպառնալիքների, որի արդյունքում խոստովանական ցուցմունք է տվել, որ կատարել է հանցագործությունը և որպես հանցակից նշել է Սերոբյանին և Ջալյանին: Վերջիններս նույնպես հայտարարել են հարցաքննությունների ժամանակ քննիչների կողմից խոշտանգումների ենթարկվելու մասին, սակայն երբեք իրենց մեղավոր չեն ճանաչել:

2005 թ. մայիսի 18-ին Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանը սպանության մեջ մեղավոր էր ճանաչել թիվ 33651 զորամասի զինծառայողներ Արայիկ Ջալյանին, Ռազմիկ Սարգսյանին և Մուսա Սերոբյանին նույն զորամասի երկու զինծառայողների սպանության համար և դատապարտել 15 տարվա ազատազրկման:

Զինվորական դատախազությունը բողոքարկել էր դատավճիռը՝ միջնորդելով ամբաստանյալներին դատապարտել ցմահ ազա-

տազրկման: Ամբաստանյալներն իրենց հերթին բողոքարկել էին դատավճիռը՝ հերքելով իրենց մեղսագրվող արարքները և խնդրել էին վերանայել գործը: ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը 2006 թ. մայիսի 30-ին Ա. Ջալյանին, Ռ. Սարգսյանին և Մ. Սերոբյանին դատապարտեց ցմահ ազատազրկման:

Սպանված զինծառայողներից մեկի հայրը, ելնելով գործում առկա բազմաթիվ հակասություններից, ներկայացրել էր վճռաբեկ բողոք, որտեղ նշել էր, որ գործի քննությունը կատարվել է քրեական դատավարության նորմերի խախտումներով, որոնք ազդել են գործի օբյեկտիվ, բազմակողմանի և լրիվ քննության վրա, որի արդյունքում զինծառայողների սպանության իրական կատարողները երկու դատավարությունների ընթացքում չեն մեղադրվել, գտնվել են ազատության մեջ, և նրանց փոխարեն ցմահ ազատազրկման են դատապարտվել երեք անմեղ զինծառայողներ:

2006 թ. դեկտեմբերի 22-ին՝ սպանությունից մոտ երեք տարի հետո, ՀՀ վճռաբեկ դատարանը բավարարել էր տուժողի իրավա-

հաջորդի՝ սպանված զինծառայողի հայր Մ. Մկրտումյանի ներկայացուցչի բողոքը, բեկանել Ռ. Սարգսյանի, Մ. Սերոբյանի և Ա. Զալյանի վերաբերյալ դատավճիռները և քրեական գործն ուղարկել նոր նախաքննության:

Հայտնի «Մատաղիսի գործում» ՀՔԱ Վանաձորի գրասենյակը ներգրավվել է դեռևս 2004 թվականից՝ տրամադրելով իրավական աջակցություն, իրականացնելով արագ արձագանքում և արդար դատաքննության իրավունքի մոնիթորինգ, կազմակերպելով հանրային միջոցառումներ (մամլո ասուլիսներ, քննարկումներ, հրատապ հայտարարություններ, բողոքի ակցիաներ, ստորագրահավաք, գործի վերաբերյալ միջազգային կազմակերպություններին տեղեկատվության տրամադրում): 2007 թ. ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից «Մատաղիսի գործը» ներկայացվել է Բաց Հասարակության Հիմնադրամներին, որի կողմից էլ այն՝ որպես ռազմավարական նշանակություն ունեցող գործ, ստացել է ֆինանսական աջակցություն: Բաց Հասարակության Հիմնադրամների օժանդակությամբ ներգրավվել է փաստաբան Հայկ Ալումյանը:

Գործը հանրային մեծ հնչեղություն է ստացել և մշտապես գտնվել է հասարակության ուշադրության կենտրոնում մի խումբ ակտիվիստների, իրավապաշտպան կազմակերպությունների և լրագրողների հետևողական ջանքերի շնորհիվ:

Արայիկ Զալյանը 2008 թ. աշխատում է Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակում որպես իրավաբան, իրավախորհրդատու:

> *Բանակային գործերի քննության այս արատավոր երևույթները վերացնելու, Հայաստանում արդարության հաղթանակի, քաղաքացու իրավունքների պաշտպանության և ապահովման, ինչպես նաև բանակի և պետության հանդեպ հասարակության վստահությունը վերականգնելու նպատակով, մենք՝ մարդու իրավունքները իբրև գերակա շահ որդեգրած հասարակության ներկայացուցիչներս, հայտարարում ենք, որ «Մատաղիսի գործը» մեր բոլորի՝ անհատ քաղաքացիների, ծնողների, մտավորականների, քաղաքական գործիչների, հասարակական կազմակերպությունների, սփյուռքի ներկայացուցիչների, միջազգային իրավապաշտպան հանրության, լրագրողների, բժիշկների, փաստաբանների համատեղ պայքարի գրագետ, հետևողական իննամյա պայքարի հաջողությունն է*
>
> ***«Բանակն իրականում» նախաձեռնություն և մի շարք հասարակական կազմակերպություններ***[10]

[10] «Մատաղիսի» գործով «Բանակն իրականում» նախաձեռնության հայտարարությունը, http://www.tert.am/am/news/2012/12/28/mataxis, http://mitk.am/մադաղիսի-գործով-բանակն-իրականում

1.4. Մարդու իրավունքների այգի

Ջինենք քաղաքացիներին գիտելիքով, որպեսզի նրանք կարողանան իրենց համայնքում կատարել դրական փոփոխություններ

2011 թ. Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի և գործընկերների կողմից նախաձեռնված Մարդու իրավունքների այգու ստեղծման աշխատանքների շրջանակներում 2012 թ. իրականացվել են մի շարք գործողություններ, մասնավորապես՝ կազմվել է Մարդու իրավունքների այգու էսքիզային նախագիծը, բիզնես պլանը, որը տրամադրվել է Վանաձորի քաղաքապետարանի ճարտարապետական բաժնին, որից հետո ավագանու որոշմամբ այգին տրվել է ՀՔԱ Վանաձորի գրասենյակին անհատույց մշտական օգտագործման: Կառավարությանն առնթեր անշարժ գույքի պետական ռեգիստրում գրանցվել է անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը: Հայտ է ներկայացվել ճարտարապետական բաժին ճարտարապետահատակագծային առաջադրանք ստանալու համար:

Նախաձեռնության[11] նպատակն է՝

- ապահովել անվտանգ և բնության մեջ բացօթյա մի միջավայր, որը հասանելի կլինի բոլոր սերունդների ներկայացուցիչներին տարվա բոլոր եղանակներին, այն կխրախուսի ու կնպաստի ազատ ժամանցի ու առողջ ապրելակերպի կազմակերպմանը
- մարդու իրավունքների այգու միջոցով ապահովել ժողովրդավարության, հանդուրժողականության, այլախոհության և մարդու իրավունքների հիմնարար արժեքների վերաբերյալ համայնքի անդամների իրազեկվածությունը:
- Հայաստանում նման այլ այգիների կառուցման համար ապահովել նախատիպ՝ ապացուցելու, թե ինչպես կարող են համայնքը և քաղաքացիական խմբերը իրենց ձայնն ունենալ հանրային վայրի նախագծման և օգտագործման գործում[12]:

[11] Նախաձեռնության մասին ավելի մանրամասն տեղեկատվության համար կարդալ՝ http://hcav.am/wp-content/uploads/2011/05/Մարդու-իրավունքների-այգի.pdf

[12] Նախաձեռնության մասին ավելի մանրամասն տեղեկատվության համար կարդալ՝ http://hcav.am/wp-content/uploads/2011/05/Մարդու-իրավունքների-այգի.pdf

1.5. Մարդու իրավունքների օր

Մարդու իրավունքների այգու հարևանությամբ գտնվող Վանաձորի թիվ 27 դպրոցում 2012 թ. դեկտեմբերի 7-ին ՀՔԱ Վանաձորի գրասենյակը միջոցառում է կազմակերպել նվիրված Մարդու իրավունքների միջազգային օրվան: Միջոցառմանը մասնակցել են դպրոցի մոտ 40 աշակերտներ: Միջոցառումը բաղկացած է եղել ուսուցողական-տեղեկատվական մասից և մրցույթից:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի եվրոպական կամավորության ծրագրի կամավորներ Յուլիա Վայսը և Գեորգ Լայթները մասնակիցներին ներկայացրել են մարդու իրավունքների պատմությունը և հասկացությունը, հիմնական կոնվենցիաները և դրանց բովանդակությունը, մասնավորապես ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան:

Մասնակիցներին ներկայացվեց նաև

Մարդու իրավունքների այգու գաղափարը և նպատակները, այգու նախագիծը և կատարվելիք աշխատանքները:

Միջոցառման երկրորդ մասում հայտարարել է Մարդու իրավունքների այգու լոգոտիպի պատրաստման մրցույթ:

Միջոցառումը հնարավոր է դարձել իրականացնել Այռեքսի հայաստանյան գրասենյակի (IREX) ֆինանսական աջակցությամբ:

2012 թ. ՀՔԱ Վանաձորի գրասենյակը հեղինակել է 14 զեկույց, վերլուծական հաշվետվություններ և տեղեկանքներ՝ ուղղված մարդու իրավունքների վիճակի ուսումնասիրությանը Հայաստանի Հանրապետությունում:

«ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ-ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ»



«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ»



«ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ 2010-2011 ԹԹ. ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ»

«ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ»

«ԱԶԱՏ ՏԵՂԱՇԱՐԺԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ»



«2012 Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 12-ԻՆ ՀՀ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ»

«ՆԱԽԱԴԵՊԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ»



«ԲԺՇԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՋՈՐԱԿՈՉԻԿՆԵՐԻ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ»



«ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի ՏԻՄ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՏՈՐԴՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ»

«ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ 2011 Թ. ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑԸ»

«ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ ՄԱՀԱՊԱՏԺԻ ՎԵՐԱՑՈՒՄԻՑ ՀԵՏՈ»

«ՏԵՂԵԿԱՆՔ 2012 Թ-ԻՆ ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՄԱՀԱՑՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ»

«2012 Թ. ՄԱՅԻՍԻ 6-Ի ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՅՑ»

«2012 Թ. ՄԱՅԻՍԻ 6-Ի ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՅՑ»

Հարձակում ՀՔԱ Վանաձորի գրասենյակի և աշխատակիցների վրա 2012 թ. ապրիլի 16-ին

2012 թ. ապրիլի 17-ին ՀՔԱ Վանաձորի գրասենյակը պլանավորել էր հյուրընկալել «Խաղաղարար նախաձեռնությունների կովկասյան կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից կազմակերպվող ադրբեջանական ֆիլմերի փառատոնը: Միջոցառման նախորդ օրը կազմակերպության գրասենյակը հարձակման ենթարկվեց ավելի քան 200 անձանց կողմից, որոնք 2012 թ. ապրիլի 16-ին՝ առավոտյան ժամը 10:30-11:00-ի սահմաններում, պաստառներով և դրոշակներով ոստիկանության աշխատակիցների ուղեկցությամբ մոտեցան կազմակերպության գրասենյակին և սկսեցին քարեր և ձվեր նետել գրասենյակի ուղղությամբ, որի արդյունքում կոտրվեցին գրասենյակի ապակիները և մարմնական վնասվածք պատճառվեց կազմակերպության աշխատակիցներից մեկին:

Ցուցարարներից մեծաթիվ մի խումբ, մտնելով գրասենյակ, պահանջ ներկայացրեց այն մասին, որ կազմակերպությունն իր տարածքը չտրամադրի «Խաղարարար նախաձեռնությունների կովկասյան կենտրոնին» հաջորդ օրը՝ ապրիլի 17-ին, ադրբեջանական ֆիլմերի ցուցադրման համար:

Գրասենյակ ներխուժած քաղաքացիներին կազմակերպության նախագահը հայտնեց, որ Խաղաղարար նախաձեռնությունների կովկասյան կենտրոնը նույն օրը՝ առավոտյան, հայտարարել էր ֆիլմերի ցուցադրության հետաձգման մասին: Ցուցարարները պահանջեցին, որպեսզի այդ մասին հրապարակավ ներկայացվի դրսում հավաքվածներին: Կազմակերպության նախագահը, հաշվի առնելով ստեղծված իրադրությունը, այդ մասին հայտարարեց խմբի կազմակերպիչների կողմից բերված բարձրախոսով:

Սակայն որոշ ժամանակ անց ցուցարարների ներկայացուցիչները երկրորդ անգամ ներխուժեցին գրասենյակ և պահանջեցին, որպեսզի կազմակերպությունը ընդհանրապես տարածքը չտրամադրի ֆիլմերի ցուցադրության համար: Այդ պահանջի ներկայացմանը զուգահեռ դրսում հավաքվածների կողմից սկսվեցին նետվել ձվեր և քարեր, ինչպես նաև հնչեցին ուղղորդված սպառնալիքներ, հայհոյանքներ գրասենյակում գտնվող կազմակերպության աշխատակիցների նկատմամբ:

Գնահատելով իրավիճակը՝ կազմակերպության ղեկավարը հետագա անկանխատեսելի հետևանքների կանխման նպատակով ստիպված հրապարակավ հայտարարեց միջոցառման չիրականանալու մասին:

Հարկ է նշել, որ ոստիկանության աշխատակիցները որևէ գործողություն չեն իրականացրել կազմակերպության աշխատակիցների անվտանգության, սպառնալիքների, բռնությունների կոչերի և հասարակական կարգի խախտման կանխարգելման ուղղությամբ՝ չնայած այն հանգամանքին, որ կազմակերպության կողմից հեռախոսազանգերի միջոցով ոստիկանությանը հայտնվել էր կազմակերպության և նրա աշխատակիցների անվտանգությանը սպառնացող վտանգի և անվտանգության ապահովման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտության մասին, որը սակայն այդպես էլ չարվեց: Ավելին, իշխանությունները քրեական պատասխանատվության չեն ենթարկել որևէ հարձակվողի[13]: Հարձակման վերաբերյալ ՀՀ քննչական

> *«Երբ ընդդիմանաք անմեղ մարդկանց նկատմամբ իրականացվող անարդարությանը, կլինեն մարդիկ, որ կպատեն ձեզ դրա համար»*
>
> ***Էլեն Ջ. Բարիեր***

գլխավոր վարչության Լոռու մարզի քննչական բաժնում նախապատրաստվել են նյութեր, որի արդյունքում 2012 թ. ապրիլի 26-ին կայացվել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում: Քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը բողոքարկվել է վերադասության, այնուհետև դատական կարգով: 2012 թ. հոկտեմբերի 16-ին Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը, կազմակերպության կողմից ներկայացված՝ քննիչի քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը վերացնելու պահանջի մասին դիմումը քննության առնելով, կայացրել է այն բավարարելու մասին որոշում: Դատարանը կազմակերպության պահանջը բավարարել է պատճառաբանությամբ, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից չի կատարվել օբյեկտիվ, բազմակողմանի և լրիվ քննություն:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի վրա հարձակման դեպքի վերաբերյալ ՀՀ իշխանություններին հայտարարությամբ դիմել են մի շարք տեղական և միջազգային կազմակերպություններ՝ մասնավորապես դատապարտելով ՀՀ-ում ադրբեջանական ֆիլմերի փառատոն անցկացնել ցանկացող քաղաքացիական հասարակության ակտիվիստների

նկատմամբ ճնշումները և կոչ են արել հարձակումների վերաբերյալ հրատապ և անաչառ քննություն իրականացնել, պատասխանատվության ենթարկել մեղավորներին և պաշտպանել բոլոր քաղաքացիների խաղաղ արտահայտվելու ազատությունը և ապահովել ֆիլմերի անվտանգ ցուցադրությունը:

Հայտարարություններով ՀՀ իշխանություններին են դիմել «Ամնեսթի ինթերնեշնլ», «Human Rights Watch» և «Ֆրիդոմ Հաուս» իրավապաշտպան կազմակերպությունները, «Մարդու իրավունքների տան ցանցը» և «Իրավապաշտպանների հարավկովկասյան ցանցը»:

[13] 1. Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ, «ՀՔԱ Վանաձորի գրասենյակի հայտարարությունը գրասենյակի վրա հարձակման մասին», 17 Ապրիլ, 2012, http://hcav.am/events/hքա-վանաձորի-գրասենյակի-հայտարարութ-7.

2. «Մտահոգված Հայաստանում իրավապաշտպան կազմակերպությունների վրա հարձակումներով», Մարդու իրավունքների տան ցանցի և Իրավապաշտպանների հարավկովկասյան ցանցի հայտարարությունը, 2012 թ. մայիսի 18, http://humanrightshouse.org/Articles/18040.html

3. «Ֆրիդոմ Հաուս» իրավապաշտպան կազմակերպության հայտարարությունը հայաստանյան իրավապաշտպանական կազմակերպությունների նկատմամբ հարձակումների վերաբերյալ, 2012 թ. ապրիլի 20, http://hcav.am/events/հայաստանում-իրավապաշտպան-կազմակերպ

4. «Ամնեսթի Ինթերնեշնլ» իրավապաշտպան կազմակերպության հայտարարությունն՝ ուղղված ՀՀ կառավարությանը Հայաստանում խոսքի ազատության և ադրբեջանական ֆիլմերի փառատոնի կազմակերպիչների անվտանգության ապահովման մասին, 2012 թ., ապրիլի 25 http://hcav.am/events/amnesty-international-ի-հրապարակային-հայտարարությունը

5. «*Իշխանությունները պետք է պաշտպանեն ազատ խոսքը՝ անվտանգ ցուցադրությունը*» Human Rights Watch միջազգային իրավապաշտպան կազմակերպության հայտարարությունը, 2012 թ.ապրիլի 17, http://hcav.am/events/հայաստան-քննել-տեղական-հասարակական-կ

Բյուջեի համեմատական վերլուծություն 2008-2012 թթ.

(<< դրամ)

	2008	2009	2010	2011	2012
Աշխատավարձ	12,341,653 31.5%	32,923,612 45.2%	35,729,242 37.5%	48,747,222 51.9%	50,839,801 49.8%
Ծրագրային ծախսեր	23,057,817 58,9%	33,381,003 45.8%	52,766,177 55.4%	37,883,267 40.4%	42,837,395 42.0%
Վարչական ծախսեր	3,776, 100 9.6%	6,609,806 9.0%	6,720,127 7.1%	7,215,556 7.7%	8,371,220 8.2%
Ընդամենը	**39,175,570**	**72,914,421**	**95,215,486**	**93,846,045**	**102,048,416**

Աշխատակիցների թիվը 2008-2012 թթ.



ՀՔԱ Վանաձորի գրասենյակի 2012 թ. բյուջեի բաշխումը ըստ ֆինանսավորման աղբյուրների



- Բաց Հասարակության Հիմնադրամներ
- Նորվեգիայի հելսինկյան կոմիտե
- Հայաստանի Հանրապետությունում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանություն
- Հայաստանի Հանրապետությունում Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն դեսպանատուն
- Հայաստանի Հանրապետությունում Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպանություն
- Ամերիկյան փաստաբանների ասոցիացիա
- ԵԱՀԿ Երևանյան գրասենյակ
- ԵՄ տեղեկատվական կենտրոն Հայաստանում
- Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակ
- Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի ցանց
- Արևելյան գործընկերություն (ԱԼԳ), Քաղաքացիական հասարակության ֆորում ներառյալ Հայաստանի ազգային պլատֆորմ
- Քաղաքացիական համերաշխության պլատֆորմ
- Իրավապաշտպանների հարավկովկասյան ցանց
- Մարդու իրավունքների տան հարավկովկասյան ցանց
- Մարդու իրավունքների տուն Երևան
- Ժողովրդավարական ընտրությունների եվրոպական պլատֆորմ
- Երիտասարդ խաղաղասերների միացյալ ցանց
- UNITED ազգայնականության, ռասիզմի, ֆաշիզմի դեմ և գաղթականների ու փախստականների աջակցության Եվրոպական ցանց
- Գործընկերություն հանուն բաց հասարակության
- Հայաստանի մարդու իրավունքների ցանց
- Հայաստանում օտարերկրյա դեսպանություններ
- Frontline Defenders - իրավապաշտպանների աջակցության կառույց
- Մարդու իրավունքների հելսինկյան հիմնադրամ, Լեհաստան
- Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ ՀԿ
- «Հայաստանի հելսինկյան կոմիտե» ՀԿ
- Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն
- «Երևանի մամուլի ակումբ» ՀԿ
- Կանանց Ռեսուրսային կենտրոն
- Գորիսի Կանանց զարգացման «Ռեսուրս կենտրոն» հիմնադրամ
- «Հասարակական հետազոտությունների առաջատար խումբ» ՀԿ
- «Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության կենտրոն» ՀԿ

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ
Հայաստան, Վանաձոր 2001,
Տիգրան Մեծի 59
Հեռ.՝ (+374 322) 4 22 68
Ֆաքս՝ (+374-322) 4 12 36
Էլ. փոստ՝ hcav@hcav.am
www.hcav.am

Լուսանկարները՝ Վարդինե Գրիգորյանի

Տպագրվել է՝ «Սիմ տպագրատուն» ՍՊԸ-ում